ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«12» հունվարի 2018 թվականի № 01-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N1559-Ա որոշման հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի (այսուհետ՝ ժամանակացույց):
2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված ժամանակացույցում նշված՝
   1) պատասխանատու կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել պահանջվող նյութերի մշակումը և դրանց ներկայացումը պատասխանատու հավաք կատարողներին,
   2) պատասխանատու հավաք կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել սույն կետի 1-ին ենթակետում նշված նյութերի ամփոփումը և ներկայացումը ժամանակացույցում նշված մարմիններին:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. հունվարի 12-ի N 01-Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ 2019թ. պետական բյուջեի մշակման գործընթացի՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2019թ. պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| I. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) մշակման աշխատանքներ | | | | | | | |
| 1 | 2. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումների ներկայացում: | մինչև 01.03.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք՝ ընդհանուր),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Էներգետիկայի պետական տեսչություն,<br>Հաշվապահական հաշվառման բաժին,<br>Ընդերքի գործակալություն | Հ.Հ. Հարությունյան,<br>Հ.Ա.Հարությունյան,<br>Վ. Գևորգյան,<br>Կ. Ղահրամանյան | մինչև 16.02.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | Միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումների կազմման մեթոդական ցուցումները կտրամադրվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից: |
| 2 | 4. ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումների ներկայացում: | մինչև 23.03.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք),<br>Ընդերքի գործակալություն | Վ. Գևորգյան | մինչև 19.03.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 3 | 10. ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում վառելիքի, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների հետ քննարկումների անցկացում: | մինչև 25.05.2018թ. | Էներգետիկայի վարչություն | Լ. Շահվերդյան | | | |
| 4 | 13. Հիմք ընդունելով ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից հաստատված ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2021թթ. ճշգրտված և 2021թ. կողմնորոշիչ չափաքանակները՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտի՝ ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ի հայտերի (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2019-2021թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ընդ որում, ինչպես ամփոփ այնպես էլ՝ ըստ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների գծով) մշակում և ներկայացում: | մինչև 01.06.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (համար),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն<br>Հաշվապահական հաշվառման բաժին,<br>«ՀԱԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ,<br>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ, «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ,<br>Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,<br>«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Հ. Հ. Հարությունյան,<br>Հ.Ա.Հարությունյան,<br>Վ. Գևորգյան,<br>Կ. Ղահրամանյան | մինչև 22.05.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | Միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և բյուջեի նախագծերի կազմման մեթոդական ցուցումները (այսուհետ՝ մեթոդական ցուցումներ) կտրամադրվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից: |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 5 | 17. ՀՀ վարչապետի մոտ Որոշմամբ հաստատված ժամանակացույցի 14-րդ կետով նախատեսված քննարկման (ըստ անհրաժեշտության) արդյունքներով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտի՝ ավարտուն տեսքի բերված ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ -ի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների ծախսերի 2019-2021թթ. ֆինանսավորման չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում: | մինչև 22.06.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք), Վարկային և դրամաշնորհային վարչություն, Էներգետիկայի վարչություն, Ընդերքի գործակալություն, Հաշվապահական հաշվառման բաժին, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ, «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Հ. Հ. Հարությունյան, Հ.Ա.Հարությունյան, Վ. Գևորգյան, Կ. Ղահրամանյան | մինչև 15.06.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |
| 6 | 18. Ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) մշակում և ներկայացում: | մինչև 22.06.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք), Վարկային և դրամաշնորհային վարչություն, Էներգետիկայի վարչություն, Ընդերքի գործակալություն, Հաշվապահական հաշվառման բաժին, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ, «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Հ. Հ. Հարությունյան, Հ.Ա.Հարությունյան, Վ. Գևորգյան, Կ. Ղահրամանյան | մինչև 15.06.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |
| II. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ ՀՀ 2019թ. պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքներ | | | | | | | |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 7 | 29. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտի 2019-2021թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված ծրագրերի գծով սահմանված ծախսերի չափաքանակների շրջանակներում ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքների՝ 2019թ. ծրագրային հայտերի քննարկում: | մինչև 25.07.2018թ.(ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության սահմանած ժամանակացույցի) | Էներգետիկայի վարչություն | Լ. Շահվերդյան | | | |
| 8 | 30. Մեթոդական ցուցումների համաձայն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և համակարգի 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ առանձին՝ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու յուրաքանչյուր մարմնի համար և ամփոփ, ինչպես նաև տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմում՝ հաշվի առնելով նաև Որոշմամբ հաստատված ժամանակացույցի 29-րդ կետով նախատեսված քննարկումների արդյունքները և ներկայացում: | մինչև 06.08.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (համակ),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն<br>Հաշվապահական հաշվառման բաժին,<br>«ՀԱԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ,<br>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ, «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ,<br>Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,<br>«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Հ.Հ. Հարությունյան,<br>Հ.Ա. Հարությունյան<br>Վ. Գևորգյան,<br>Կ. Ղահրամանյան | մինչև 13.07.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 9 | 32. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ոլորտում՝ ՀՀ 2019թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների հայտերի կազմում և ներկայացում: | մինչև 06.08.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք), Վարկային և դրամաշնորհային վարչություն, Էներգետիկայի վարչություն, Էներգետիկայի պետական տեսչություն, Հաշվապահական հաշվառման բաժին, Ընդերքի գործակալություն | Հ.Հ. Հարությունյան, Հ.Ա. Հարությունյան, Վ. Գևորգյան, Կ. Ղահրամանյան | մինչև 20.07.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |
| 10 | 33. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգում օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի ու դրամաշնորհների 2019թ. օգտագործման մասին կանխատեսումների կազմում և | մինչև 06.08.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք), Վարկային և դրամաշնորհային վարչություն, Էներգետիկայի վարչություն | Հ.Հ. Հարությունյան, Հ.Ա. Հարությունյան, Կ. Ղահրամանյան | մինչև 27.07.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |
| 11 | 36. ՀՀ կառավարության 2019թ. պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2019թ. սոցիալ- | մինչև 22.08.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն, Էներգետիկայի վարչություն, Վարկային և դրամաշնորհային վարչություն, | Հ.Ա. Հարությունյան, Հ.Հ. Հարությունյան, Վ. Գևորգյան, | մինչև 15.08.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության իրավասությանը վերաբերող համապատասխան հատվածների նախագծերի (մինչև 3 էջի սահմաններում) մշակում և ներկայացում: | | Ընդերքի գործակալություն | Կ. Ղահրամանյան | | | |
| 12 | 38. ՀՀ 2019թ. պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերի մշակում (ըստ անհրաժեշտության) և ներկայացում: | մինչև 05.09.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (համակ.),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն | Հ. Հարությունյան,<br>Հ.Ա. Հարությունյան,<br>Վ. Գևորգյան,<br>Կ. Ղահրամանյան | մինչև 29.08.2018թ. | ՀՀ կառավարություն | |
| 13 | 42. ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ում ընդգրկված և 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտում, որպես բյուջետային ֆինանսավորում պահանջող, նախատեսվելիք ծրագրերի նախագծերի մշակում և անհրաժեշտության դեպքում դրանց ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը: | մինչև 20.09.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (համակ.),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն | Հ.Հ. Հարությունյան,<br>Հ.Ա. Հարությունյան,<br>Վ. Գևորգյան | մինչև 11.09.2018թ. | | |
| 14 | 43. ՀՀ 2019թ. պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերի քննարկման ապահովում՝ ՀՀ կառավարությունում: | մինչև 20.09.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (համակ.),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն | Հ.Հ. Հարությունյան,<br>Հ.Ա. Հարությունյան,<br>Վ. Գևորգյան | | | |

| N | ՀՀ վարչապետի 2017թ. դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված ժամանակացույցի պահանջները | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը | Փաստաթղթերը ստացող մարմինները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 15 | 53. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և համակարգի 2019թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսային ծրագրերի գծով հատկացումների տարածքային բաշխմամբ ներկայացում (առանձնացված՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի): | մինչև 10.12.2018թ. | Ֆինանսատնտեսագիտական վարչություն (հավաք),<br>Վարկային և դրամաշնորհային վարչություն,<br>Էներգետիկայի վարչություն,<br>Ընդերքի գործակալություն,<br>Հաշվապահական հաշվառման բաժին,<br>«ՀԱԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ,<br>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ, «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ,<br>Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,<br>«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Հ.Հ. Հարությունյան,<br>Հ.Ա. Հարությունյան,<br>Վ. Գևորգյան,<br>Կ. Ղահրամանյան | մինչև 03.12.2018թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն | |